

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլ է և տարվանը 6 ռուբլ:

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ:

(Պատրագրադարացիք դիմում են ուղղակի
Խմբագր. Քեդակսի „Մուսկո“)

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Տաղի կիրակի և տոն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆ

Յունիսի 6-ին հայ թատրոնականների և
դերասանների խումբն իտալիայում մի ներկայացուց-
ման տուեց Արծրունու թատրոնում յօգուտ
հասնող. Մ. Ամերիկեանի ընտանիքի:

Իսպանիայի հետեւեալ պիեսները. «Անա-
նուն կատար» փոխադրութիւն. պ. Գ. Մալիկեան
նի, «Իշխրեայ սարը խէր է», հեղ. Գ. Սուն-
դուկանի, և «Ժանս և Ժանէտ», օպերա-վո-
զըլլի, Թարգ. Նաչրուդանի: Աւելորդ է
ասել, որ ներկայացման նպատակը շատ գեղե-
ցիկ էր, ախտոս որ թատրոնի մէջ մի քանի
տեղեր դարձան էին: Թատրոնը, ինչպէս տե-
ղեկացանք հաստատ աղբիւրներից, ձրի էր
տուած:

«Անանուն կատար» փոքրիկը, որ մի քանի
անգամ խաղացվել է շատ թող պէտք է անցնէր,
եթէ պ. պ. Մ. Պետրոսեան և Մելիք-Արա-
մեանը իրանց խաղով նրան կենդանութիւն
չը տային: Տ. Սաթրիկ-Մալիկեանի և պ. Զը-

մելիկեանի խաղը շատ անգոյն էին: Մեր կար-
ծիքով շատ լաւ կը լինէր, որ տ. և պ. Մալի-
կեանները փոխէին իրանց ամուսնու և սկսէին
պառաւանքի դերեր կատարել: Իհրասանը ամեն
տեսակ հասարակում նոյն դերերը խաղալ է
կարող: Այդ ճշմարտութիւնը ապացուցանում
էր տ. Սաթրիկ-Մալիկեան, որ բոլորովին չը
կարողացաւ երիտասարդ կնոջ դերը կատարել:
Տիկնոջ խաղը այնքան վատ էր, որ մինչև
անգամ նա խանդարում էր և պ. Մ. Պետրո-
սեանին: Այն սիրահարական խօսքերը, որ
Պաշտպանը ասում էր Նիխարէթին Տի-
ճաղ էին յարուցանում հասարակութեան
մէջ: Վերջապէս ժամանակ է, որ պատուելի
տիկնոջ յետ քաշվի, փոխի իր ամուսնու և
տեղ տայ այնպիսի տաղանդին, ինչպէս օր.
Վ. Պաշտպանն է, որի խաղի հետ պատուելի
տիկնոջ խաղը համեմատել անգամ չենք կա-
րող: Վերջապէս այդ փոքրիկի մասին մեր
խօսքը կասնք, որ եթէ Մ. Պետրոսեանը և
Մելիք-Արամեանը չը լինէին, հասարակու-
թիւնը պէտք է սաստիկ ձանձրանար:

«Իշխրեայ սարը խէր է» փոքրիկի մասին
խօսելն անգամ աւելորդ ենք համարում: Դա
մի այնպիսի պիեսա է, որ կորցրել է իր ժա-
մանակակից նշանակութիւնը և որ կարելի է
ներկայացնել 5 տարին մի անգամ, իբրեւ հը-
նութիւն: Այդ պիեսայի մէջ Վելիկի դերում
առաջին անգամ բեմ դուրս եկաւ օր. Ս. Բո-
տիկեանը, որի բեմական ընդունակութիւնների
մասին ոչինչ վճռական չենք կարող ասել,
որովհետեւ Վելիկի դերը այնքան անգոյն է
որ մի փորձած դերասանուհի անգամ նրանից

չէ կարող մի բան շինել: Օրիորդը բաւական
լաւ ձայն ունի, բեմի վրա իրան ազատ էր
պահում, իսկ այդ իրողութիւնները գրաւա-
կան էին, որ ժամանակով օր. Բոտիկեանը կա-
րող է աշուղութիւն ունենալ:

Առհասարակ ամբողջ ներկայացմանը կեն-
դանութիւն տուողները պ. Մ. Պետրոսեանը
և օր. Վ. Պաշտպանն էին, չը նայելով որ այս
վերջինը երեսնայ միայն «Ժանս և Ժանէտ» օպերա
փոքրիկի մէջ: Վնչպէս տեղ էր «Անանուն»
կատարը, «Իշխրեայ սարը խէր է» սաստիկ
հնացած է, օր. Բոտիկեանը բաւա-
կան լաւ խաղաց, «Ժանս և Ժանէտ» շատ գե-
ղեցիկ էր, Մ. Պետրոսեանի և օր. Վ. Պա-
շտպանի խաղը հրաշալի էր, ահա այն
խօսքերը, որ կրկնում էր ամբողջ հասարա-
կութիւնը, և ճշմարիտ «Ժանս և Ժանէտ»
նման աղքատ բովանդակութիւն և աննշան
ինտրիգ ունեցող պիեսան այդպէս լաւ կատա-
րելու համար, պէտք է նոյնքան բեմական
ընդունակութիւն և տաղանդ ունենալ, որքան
ունեն օր. Վ. Պաշտպան և պ. Մ. Պետրո-
սեան:

Հօրեղբայրը իր հարստութիւնը փոխանակ
ուղղակի ժառանգին (Ժանս, Մ. Պետրոսեան)
թողնելու, կտակում է իր կնքածին (Ժանետ,
օր. Պաշտպան): Օրիորդը ժառանգութիւնը
վերադարձնում է Ժանսին և իրան էլ աւե-
լացնում հօրեղբոր հարստութեան վրա, ա-
մուսնանում է Ժանսի հետ: Ահա փոքրիկի
բովանդակութիւնը: Քիչ բան է, այնպէս չէ:
Բայց պէտք է լինել թատրոնում, պէտք էր
տեսնել օր. Պաշտպանին գեղջկուհու հա-

գուստով, լսել նրա երգը, պէտք էր նայել Մ.
Պետրոսեանի համարձակ և գեղեցիկ խաղը,
որ կարելի լինէր դադարաւ կազմել այդ վո-
զըլլի ներկայացման մասին: Նրբ ժանետը չէ
համարձակվում մի բան ասել, նա խաղում է
իր գոյնցի հետ, այսպիսի մի հասարակ դո-
ժի վրա անգամ ուշադրութիւն էր դարձրած
և վերին աստիճանի կատարելագործված էր:
Ժանս սկզբից չէ հաւանում Ժանետին, նրան
արհամարհում է, կամենում է ուրիշ կնոջ
հետ ժամանակ անցկացնել, իսկ յետոյ նկա-
տում է աղջկայ բարի սիրտը, նրա գեղեց-
կութիւնը և սիրահարվում է Ժանետի վրա:
Յանդուգն շարժանից, յանկարծ Ժանսն իտ-
նարհ ծառայ է դառնում, արհամարհող պա-
րոնից, Ժանսն հեղ և անհամարձակ սիրահար
է դառնում: Ինչպէս լաւ կատարեց այդ փո-
փոխութիւնը պ. Մ. Պետրոսեան: Մեզ կասեն,
որ փոքր բաների վրա մեծ ուշադրութիւն
ենք դարձնում, բայց այդ փոքր բաները մշակ-
ված և մտածված խաղ են պահանջում, և
դրանք էին օր. Պաշտպանի և Մ. Պետրոսեա-
նի խաղի արժանաւորութիւնները:

Հասարակութիւնը իր երկու սերկիւններին
ծափահարութիւններով ընդունում է, իսկ
խաղից յետոյ աւելի ոգևորված ծափահա-
րութիւններով է ուղևորում:

Մի նկատողութիւն կանենք պ. Մ. Պե-
տրոսեանին: Պարտի իր գեղեցիկ և մտածված
խաղով պատիւ է բերում հայոց բեմին, բայց
նրան պատիւ չէ բերում այն համագանքը,
որ հայոց լեզուի մէջ մինչև հիմա սխալներ
է անում, երբորդ գէմքը խառնում է երկրոր-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԵՐԹԱՅԻՆ ՆԻԹԱԿԱՆ ՀԱՐՍՈՒԹԻՒՆՆԵՐԸ

(Հարուստութիւն և վերջ)

Ընթերցողը նկատած կը լինէր մինչև այժմ, որ
Երթալի քաղաքակրթի երկրները շատ բանե-
րում կարողութիւն ունեն այլ աւելի ստոր եր-
կրների մէջ. երկրագործութիւնը բարձր է, բայց
անբաւական, ուրեմն պակասորդը պիտի լրացնել
փայտի մէջ կայ նոյն կարողութիւնը. անտառները,
որոնց մասին մենք չը խօսեցինք, նմանապէս լաւ
մշակված են, բայց նոցա արդիւնաբերութիւնը
համեմատապէս նուազ լինելով, մեծ մասամբ ջնջ-
վում են երկրի երեսից. աղբաբնակութիւնը բազ-
մանում է, գիւղեր և քաղաքներ են հիմնվում, հար-
կաւոր է ջրանցքներ և երկաթուղիներ անցնել,
նաև ցորենի և պտուղների աւելի չափաւորու-
թիւնը և գործարարութեան համար կարեւոր հում
բերքերի կարողութիւնը և այլն ուրիշ հանգամանք-
ներ ստիպում են անտառներին իրանց տեղը տալ
այլ մշակութեան, ուրեմն Երթալի փայտն էլ է
պակաս. մենք նմանապէս տեսանք, որ կեանքին
անհրաժեշտ միայն էլ է պակաս, ուրեմն այլ տե-
ղերից պիտի բերել տալ. մենք տեսանք նմանա-
նապէս, որ մեծ, ահագին ծախսեր են լինում ճա-
նապարհների բանաւոր համար. նաև որքան կար-
ողութիւն ունէ Երթալի հում բերքերի մէջ....
բամբակ բուծել, կօկոն, կաշի և այլն, այդ բոլորի
համար Երթալի կրկին պիտի ուրիշ երկրներ
գիւղէ, Հապա ինչով են նոյն լուսաւոր երկրները

այդ բոլոր ծախսերի դէմը առնում, ինչով են
վճարում և բացի դրանից, դեռ ամենից հարս-
տանում, ամենի աղբերը կուրացնում, ամենի
դարմանում: Պատասխանը շատ հասարակ է. ինչ
նա ստանում է օտար երկրներից, իբրեւ հում
բերքեր, նոցա այլափոխում է իր հրէշաւոր հիմ-
նարկութիւններում, որոնց անուանում են գործա-
րանքներ, և այդ գործարանները, ֆաբրիկաները
հում իր պիտոյքների և հանգրքների համար դա-
հում, հում էլ ուրիշ տեղեր, այդ գործարան-
ներին կարօտ երկրները ուղարկում և մեծ չափով
ծախում: Ընթերցողին ակնատես լինելու հա-
մար, վերջինք օրինակի համար Անգլիայի մեծ
քանակութիւններ մուծած և արտահանած միջանի
ապրանքները և դուք կը տեսնէք թէ կիւրը որ
կողմն է. եթէ վերջինք այդ երկրի առևտուրի
ցուցակը, ձեր աչքին խոյրն մի քանի մեծ թուա-
նշաններ կըմխեն: Այդ հաստատութիւնն են
ներմուծութեան համար (1877 թ.) ցորեն 211
միլլ. ռուբլ. արծէքով (33,8 միլլ. ֆ. ստեր.), բամ-
բակ—218 միլլ. ռուբլ. (35 միլլ. ֆ. ստ.), հում
չաքար—131 միլլ. ռուբլ., բուրդ—149 միլլ. ռուբ-
լու.: Անգլիայի մէջ ամենազարգացած գործա-
րանութիւնը—բամբակեղեն գործուածքների մէջն է
և նոյն տարում նա արտահանել է բամբակեղեն
գործուածքներ իր բոլոր տեսակներով (թեւ, կտաւ,
մահուր և այլն)—337 միլլ. ռուբլ. (54 միլլ. ֆ.
ստեր.), այստեղ չէ հաշվում ի հարկէ այդ գոր-
ծուածքների այն մասը, որը մուտ է երկրում, որը
մի անգամ դուրս պիտի ներկայացնի. պողպա-
տից չինած առարկաներ դուրս են բերված նոյն
տարում աւելի քան 125 միլլ. ռուբլ., բրդեղեն
118 միլլ. ռուբլ., երկաթի և կշիկի գործուածքներ
մօտ 110 միլլ. ռուբլ. և այլն. և այստեղ նմանա-
պէս պիտի ի նկատի առնած, որ մաքսատնիւնում
հաշուում են ապրանքների գները համեմատ սոցա
նոստած ծախսերին. քանի որ իսկապէս այդ եր-
կրներում նոցա պիտի աւելի արծէքով վճարա-
վեն (Երթալից) պիտի արդէն նշանարած լինի, որ
այս արտահանած ապրանքները հում ապրանքներ

չեն, այլ սոցանից պատրաստած գործուածքներ են,
և այդ է որով դանդաղանում է մի աւելի առա-
ջադէմ երկրի աւելի յետադէմ երկրից, ուր ընդ-
հակառակը հում ապրանքներ արտահանվում են,
իսկ գործուածքներ ստանում այլ երկրներից: Նախ
քան խօսենք Երթալի ընդհանուր առևտրի մա-
սին, մի բան չը մոռանալ միևնույն, որի մասին
շատ են խօսում և երկար ատենէ վեր թէ տըն-
տեսապէստեղի և թէ պոքրիցստեղի հանապազո-
րեայ ճառատանքների առարկայ էր դարձել և որը
մինչ այժմ դեռ չէ դադարած շատերի զբաղելու
Այդ այն է, ինչ որ անուանում են առևտուրի
հաւասարակշռութիւն: Բացառելով դուրս նշանա-
կութիւնը իր ցանկանում են իմանալ թէ ար-
դեք այս տարեկան առևտուրը բաղդաւոր էր մի
երկրի համար, թէ ոչ, բաղդաւորում են, կամ ա-
ւելի լաւ ասած, բաղդաւորում էին ներմուծութեան
և արտահանութեան գումարները. եթէ ներմու-
ծութիւնը աւելի է քան արտահանութիւնը
—դրանից հետեւանում էին, որ օտար եր-
կրները այդ երկրից աւելի փող վերցրին, ու-
րեմն այս վերջինը աւելի աղքատացաւ, իսկ եթէ
հակառակը պատահի, օգուտը այդ երկրի կողմն
է վճռում: Այդ կարծիքը յաւանդացած է մի այլ
կարծիքից, որի մասին մենք արդէն առիթ ունե-
ցանք խօսելու. այն է. իբր թէ երկրի ամբողջ հա-
րստութիւնը միայն փողի մէջն է կայանում: Եթէ
ընթերցողը դիտեայ թէ ինչ արեւմտի հետեւանը-
ներ է յաւանդացել այդ գոյակից, որին տալիս
են միևնույն, առևտրական անունը, նա կը տար-
ափի. երկակայնէք, որ այս վերջինը աւելի քան
երկու տարեկան պատերազմների ամենազրկաւոր
պատճառը հենց այդ սխալ կարծիքն է եղել. ամեն
տէրութիւն իր հարստութիւնները միւս երկրների
ոսկու և արծաթի մէջ տեսնելով, աշխատում էր
զանազան կարգադրութիւններով արգելել ներմու-
ծութիւնը իր երկրի մէջ, իսկ միւս կողմից իւրա-
խառնում արտահանութիւնը, որպէս զի իր առև-
տուրը ամեն տեղ տրէք. պատերազմներ էին
անում այդ նպատակին համեմու համար, օ-

գուտը միայն արտաքին առևտուրի մէջ տեսնելով,
այն ժամանակվայ բոլոր դուրսուր տէրութիւնները,
Անգլիան, Հոլանդիան, Սպանիան, Ֆրանսիան
մաքաւում էին իրար հետ գաղթականութիւններ
ձեռք բերելու, որպէս զի բնակիչների հետ առև-
տրական կապակցութիւններ սկսեն: Այդ տխուր
կարծիքների մէջ խորատուգլած Անգլիայի մէջ էր,
որ անցեալ դարում վերջապէս մի մարդ իր փիլի-
սոփական ձայնը բարձրացրեց այդ գոյակիցները
հիմնադրական փշուրէ համար. այդ այն ժամանակն
էր, հարկւր տարի ստրակից առաւ, երբ Ամերիկա-
յի Հիւսիսային Նահանգները դէմ էր ձեռնի անգ-
լիացիների իշխանութեան լուծից ազատվելու հա-
մար պատերազմ էին յայտնել. նոյն անգլիացի մար-
դը, Ալլան Սմիթը, յօգուտ իր երկրի, իր հայրե-
նիքի, ամերիկացիների յաջողութիւնը մինչև ան-
գամ ծափահարում էր: Անգլիան յաղթվեց, դրկ-
վեց անաղին հողերից, բայց Սմիթի գուշակութիւն-
ները նմանապէս հաստատվեցան. Անգլիան ազատ
առևտուրով դառաւ աւելի հարուստ աւելի բար-
գաւած: Առևտրական հաւասարակշռութիւնը նոյն
սխալ գոյակիցի հետեւանքն է. այս բոլորի, Ֆրան-
սիան, օրինակ այս վերջին տարիներում աւելի
ներմուծում է քան արտահանում, իսկ Ամերիկ.
Հիւսիսային Միաց. — Նահանգները ընդհակառակը
բայց ոչ մի տեղ գուցէ նոյնքան չեն դանդաղում
առևտուրի վատութիւնից, որքան այս վերջին երկ-
րում. գործարանները մեծ քանակութեամբ կանգ են
առել, մանկութիւնները բազմացել, տէրուական
ստանալիքը նուազացել, մինչդեռ Ֆրանսիայում,
որը ընդհանուր կրկի պատճառով նմանապէս
թշուառ օրեր է կրում, այնու ամենայնիւ ոչ թէ
միայն Միացեալ-Նահանգներից, այլ բոլոր եւրո-
պական այլ տէրութիւններից լաւագոյն դրութեան
մէջ է: Դուրս պատճառը անտեսադէտներից չա-
տերը ուղղում են նորանում տեսնել, որ թէպէտ և
երկրի ընդհանուր արտահանութիւնը փոքրացել է,
բայց գործարանական արդիւնքների արտահանու-
թիւնը չէ դադարած տարից տարի աւելի:
Բայց բաւ է այսքանը այդ հարցի մասին, ման-

U. U.

բուստի ջերմ լինել է, աղքատի ձայնը լսող չը կայ: Խաղաղ 50 լուրջի ծախսով ցորենը հացագործ հայրենիքը քիչ մնաց 60-ի հասցնելու: Այս օրերում դարձաւ բռնկանք մի հայր որ իր սեփական շտեմարանից բերած ցորենը 60 լուրջով առնում էր. այդ չարիքը առաջին անգամը չէ որ կրկնվում է: Հայրենի օտարականութեանը մասնակցելն, մի քանի օրից յետոյ նորան դարձաւ կարելի է իր դերումը տեսնել: Բացի հացից, մեղանում նոյնպէս սով է մեծագումար թուղթ փողի: Եթէ կամենում ես մի տեղ փոստով փող ուղարկել, 100-անոց կամ 25-անոց ձեռք բերելու համար, պետք է երեսուն կամ քառասուն կոպէկ աւելի վճարես. քանի որ քանակաւոր մօտ այնտեղ էլ չը կայ, բայց չար լեզուները պատմում են որպէս թէ մեծագումար թուղթ փողերը պ. գանձապահը փոխում է սեղա-նաւորների հետ, (այդտեղ ի հարկէ նա ունի իր առանձին հայրը) մութ տեղի բան է, ով գիտէ ճշմարիտ է, թէ մեղք են բարձում խեղճ գանձապահի վրա: Լուսւմ ենք մօտեցել է քաղաքային վարչութեան համար ձայնաւորներ ընտրելու օրերը. թէ ինչ տաղանդներ կը չըմայատեն մեր պ. քաղաքային դժուար չէ գուշակել, բայց յիշանաւ և քաղաքային վարչութիւն, այդ ինձ դարձաւ կասկածելի է թուում: Մեր նոր թեմական տեսուչ պ. Պետրեանցը, բաւական լայն է ընդարձակ հրահանգներ ունի ստացած վեհափառ Կաթողիկոսից, նա կամենում է իր գործունէութեան առաջին տարի ձգել իր հայրենի հողի վրա Աշտարակ գիւղում: Աշտարակը որպէս մի պատմական գիւղ, որը պարզեւն է հայոց ազգին ակնհասոր անհատներ, նա վաղուց պէտք է գցար իր օրինակը դպրոցներ հանաւոր պահանջը և ոչ թէ այսօր: Աշտարակը լուրջին մինչև այդ աստիճան այն էլ Աշտարակի մէջ ամօթ և նախառնիք է այնտեղի ժողովրդի համար: Աշտարակը դպրոցից յետոյ թող ներուի ինձ պ. Պետրեանցը ուղարկելու հրահանգը զգալի չափով, այդ Սահարա անապատի վրա, որտեղ ոչ մի չարժու և կենդանութեան նշան չէ տեսնուում: Թէ Նախիջևանը և թէ նորա չուրջ գտնված բազմաթիւ գիւղերը խրված են խորին սոգիտութեան մէջ: Վախի՛ս վերջին համարները մէկի մէջ գրված էր թէ մի քանի աղքատէր ձեռացողների ջիւղ խարժը պակասելու պէս թատրոնի են դիմում: Այդ կարիճները դուրս չէ և մեր քաղաքը: Ստէպ ստէպ կարելի է կարգաւ պատերի վրա ափիլաներ. օվերեն են գործող անձինքը, ինչէ չկան վաղվում դոցա մէջ թատրոնի երես անգամ չը տեսնողներ կան: Բայց եկէ՛ք այդ պարոնների մօտ և տեսէ՛ք թատրոնի վերաբերութեամբ որքան երկելի գաղաղութիւններ են տալիս: Զարմանալին այն է որ պարոնի մէկը մի հայ թերթի միջոցաւ յափշտակված դոցա խաղի վրա, յայտնել էր. «Եթէ այդպիսի ներկայացումներ կրկնվեն, թատրոնի վարչութիւնը ստիպված պէտք է մեծացնի բեմը»:

Արդե՛ք պարոնը ուղեցել է ծիւղ իրողութիւն պատմել թէ ծիւղայել: Դանի՛նում քսան մարդ չը կայ նստած, բեմի մեծացնելու վրա են մտածում: Զը գիտե՛ք այսօր ինչու վշտացած են այն մի քանի երկտասարդները, որոնք համարվում էին թատրոնի հիմնական անդամներ, և մասամբ նոցա աշխատութեան արդարեւն են այսօրվայ բեմի գեղեցիկ զարդարանքը: Նորա տեղի են տվել, առաջադէպ մնացել է այնպիսիների ձեռքում, որոնք արատաւորում են բեմի անունը: Խորհուրդ եմ տալիս թատրոնի վարչութեանը չը հրապարակել նոցա տված մի քանի կոպէկներով: Թէ ինչ փեսա կարող է կրել այդպիսիներից թատրոնը, այդ յետոյ զգալի կը լինի: Թողնե՛ք թատրոնը. թէ մեր քրնքայ ձեռք և թէ իսկական դպրոցներում մտաւորական զարգացումն այնքան առաջ չէ գնում որքան նորաձեւութիւններին հետեւել: Ընթերցողը արդէն գիտեն որ կանանց հագուստի վրա վերջի, անգամ նշմարվում էր մի նոր մօդա, խօսք այն շնորհալի երկաթի կտորի վրա է, որ կանանց օձինքը սովորելով թող է տալիս նոցա ազատ չըլել: հանրի մէջ յիշեալ երկաթը միայն բարձր դասակարգի մէջ ընդունելութիւն գտաւ, իսկ միջին և հասարակ դասերի կանայք շատ սիրում են ձայն ձեռքով պոչաբանացի բռնելը: Ինձ յաճախակի պատահում էր յիշանի հայ օրիորդական դպրոցների մէկի վարժուհու տեսնել, որ միշտ ձախ ձեռքով բարձրացած ունէր իր օձիքը տեղի և անտեղի ժամանակ, մօդա է, մտածելով անցնում էի: Բայց մի օր ես որքան զարմացայ, երբ մի փոքրիկ աշակերտուհի, որի հագի գերկան ծնկներին մի փոքր ցած էր, նա էլ մօդային հետեւելով, երկու մատով իր կարճ հագուստը բարձրացած, դպրոց էր շտապում: Ամառվան չըբերը կամաց կամաց սկսում են, թողնելով յիշանը միջանի օրից յետոյ Դարչախաղի հրաշալի հովիտն ենք զիմուք, որտեղից գուցէ կրկին տեսնուեմ «Մշակի» ընթերցողների հետ:

Ա. Եր.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Վ.Ա.ԳՈՒԼԻՍԻՑ հաղորդում են, թէ Ագուլիսի դպրոցների նոր հոգաբարձութիւնը աշխատում է գալոց ուսումնական տարվայ համար ուսուցչական խումբը միմիայն տեղացի վարժապետներից կազմել, և ընտրում է այնպիսի մարդիկ, որոնք իրանց մանկավարժական դաւլար ունենան: Ագուլիսի դպրոցների գլխին սովորեն Նաւահագիրը խորհուրդ է տալիս, որ այս նոր խումբը լրացնելու համար, հոգաբարձութիւնը չը մոռանայ և ուսումնայ Մարթովն զա նոյնպէս մի երեւելի դաւլար է, գիտէ մանկավարժութիւնը այնքան, որքան իմանում է իր արհեստը, և մի քանի տարի իր խանութում աշակերտներ էր կազմեցնում:

Նոյն տեղից հաղորդում են, թէ մայիսի 15-ից պ. Մէլիք-Յակոբեանը զգուշով դադարեցրուց իր դասատւութիւնները: Դպրոցները բոլորովին անտէր մնալով, երկրորդ և երրորդ դասարանների աշակերտները ցրվեցան: Մնացած վարժապետները դիտաւորութիւն չունեն իրանց աշակերտներին քննութեան ներկայացնելու:

Նոյն տեղից գրում են, թէ Ագուլիսի դպրոցները բարեկարգութեան համար կազմված մասնաժողովի պատրաստած ծրագիրը բոլորովին ապարդիւն և աննպատակաբարձը գտնելով, թողնելով առանց ուղարկութեան: Այժմ գործը մնում է նոր ընտրված հոգաբարձութեանը որ նոր անօրէնութիւն անէ: Ինչ պէտք է անեն, երբ երեք հոգաբարձուներից երկուսը նոյն մասնաժողովի անդամներ են...

Ստացանք ՆՈՒՆՈՒՑ պ. Միլոշան Պատուականանից 13 լուրջ յօգուտ «Արարատեան ընկերութեան»:

Խնդրում ենք մեր թղթակիցներին դրամական ծրարների հետ յօդուածներ չուղարկել:

Մեզ հաղորդում են ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ, որ այդ քաղաքի և Նոր-Բայազէթի ճանապարհի վրա 3 հայ են սպանել և մարմինները այրել:

Ստացանք ՆՈՒՆՈՒՑ Գրիգորի վարդապետ Տէր-Յակոբեանից 118 ր. 26 Կ., յօգուտ «Կիլիկեան» ընկերութեան, բայց որովհետեւ մենք միայն «Ա. Բարաթեան» ընկերութեան համար ենք նուիրատուութիւններ հաւաքում, այդ փողերը վարդապետի նամակի հետ ուղարկեցինք «Միւղու» խմբագրատնոց:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ա.Գ.Լ.Լ.

Բիւրի-Սէն-Էդմունդ քաղաքում կայացած պահպանողականների մի բանկետում, ծովային հաղորդութիւնների միջնորդը բողոքեց այն սուտ լուրի դէմ, որ իբր Անգլիայի և Փրանսիայի մէջ Նեպոլեոնի վերաբերութեամբ անհամաձայնութիւններ ու գետնութիւններ են ծագել: Միջնորդը պարզ յայտնեց, որ այդ երկու պետութիւնների մէջ կատարեալ և ամենաբարեկամական յարաբերութիւններ կան:

Խեղիվ սարսափելի կերպով սխալվել է իր վերջին բռնած քննադատութիւնը: Նեպոլեոնի այդ հարցի վճռելու մասին շատ նախազգուշութիւն և մանաւանդ մեծ հանձար է հարկաւոր: Անգլիան և Փրանսիան հաստատ վրձուել են չը շտապել և գործել կարելի եղածին չափ մեծ հեռաւորութեամբ:

Անգլիական կառավարութիւնը չէ ընդդիմադրում Յունաստանի ձգտումներին, միայն նա չէ կամենում, որ Յունաստանը մի նոր պատերազմ մէջ մտնի:

Անգլիան յաջողութիւն է ցանկանում յունական հողերի ընդարձակվելուն, և ձեռք ձեռքի տուած մեծ պետութիւնների հետ միասին, նա բոլոր իր ջանքերը չի խնայել տալու Յունաստանին այն, ինչ որ կարելի և օգտակար կը լինի նրա համար:

Կապից մայիսի 20-ին հաղորդում են «Agence Reuters»-ին, որ Յէտիվայո մարդ է ուղարկել Կրէյայո գետերակի մօտ, խնդրելով, որ այս վերջինը նրա մօտ ուղարկէ մի եւրօպացի, որպէս զի նա կարողանայ այդ եւրօպացու հետ խօսել հաշտութեան պայմանների մասին:

Նրա խնդրից համաձայն մի անգլիացի պատգամաւոր գնաց առաջնորդի բանակը. բայց նա վերադարձաւ առանց որ և է վրձուական պատասխան բերելու:

Հաւատացնում են, որ այդ բանաձեւացութիւնները այն պատճառով ոչինչ եզրակացութեան չը հասան, որովհետեւ բրիտանական իշխանութիւնը հաստատ մեղքում դրել է նրա բացարձակ հպատակութեան աւելի, ուրիշ ոչինչ պայման չընդունել:

Միւս կողմից էլ կասկածում են Յէտիվայոյ անկեղծութեան մասին:

ԻՏԱԼԻԱ

Կատանի համալսարանի Ֆիլիքայի և երկրաօսութեան պրօֆէսոր պ. Օ. Սիլվեստրի այս օրերս մի քանի մանրամասն ու հետաքրքիր հետազոտութիւններ է արել Եւրոպայի վիժման ներկայ տարօրինակ երեւոյթի վերաբերութեամբ:

Պրօֆէսոր Սիլվեստրի ասում է, որ հրաբուխի կրատէրը (բերան) արտալիժում է մի առանձին աղմուկով մեծ քանակութիւն ցեխի, որը սաստիկ թանձրէ, աղի և ծխաշունչ:

Այս արտաթորուղ ցեխը կարծես մի տեսակ անապատիկ աղբիւր է կազմում, որը ժամանակ տա ժամանակ սինձա՛ն բորձրանում է հողի մակերեւոյթից 7—8 մէտր բարձրութեամբ: (Մօտաւորապէս 10 արշին): Երբեմն երբեմն այդ արտալիժով ցեխի մէջ նկատվում են զազով լցված մեծ-մեծ գունդեր, որոնց ծաւալը օրի մէջ հետզհետեւ ընդարձակվելով, հասնում են այն կէտին, որ վերջապէս ճայթվում են:

Կրատէրից վիժած հիւթը այնքան սաստիկ է, որ նա արդէն ցեխոտ հեղեղներ է կազմել, որոնք շարունակ սնունդ ստանալով ընդարձակվելով, հասնում են գէպի լեռան ստորոտում գտնված գիւղերը: Հանդերը ջրելու համար պատրաստ գիւղացի ջրմուղները տեւի արագացնում են այդ հեղեղների քայքայ, որովհետեւ այդ հոսուն նիւթը միանգամայն մոնելով այդ ջրմուղների մէջ էլ իր առաջ ոչինչ արգելք չէ գտնում որոշեալ տեղերը համեմու:

Նա արդէն 5 թէ 6 կիլօմետր տարածութիւն է անցել: Գիւղացիները և կառուածաւորները բոլորովին շփոթված ու վհատած են. նրանք այդ ցախին դարման տանելու համար քարեր, հող և զանազան նիւթեր են ժողովում, որպէս զի այդպէսով կարողանան հողակցներին շինել և արգելք դնել այդ հոսուն նիւթի ընթացքին, որը եթէ փոքր ինչ էլ դանդաղել, կը սխալվի ու բոլորովին անապատ կը դարձնէ այն եղեմական սիրուն դաշտերը:

Մէտիկայից յունիսի 6-ից հեռացրում են Լուսի, որ նայելով գլխաւոր հոսանքի արագութեանը, լուսան հետեւեալ օրը Ալկանտարե կը հասնի. այդ օրը լուսան գտնվում էր քաղաքից մօտաւորապէս հինգ հարիւր մէտր հեռաւորութեամբ: Սարսափը ընդհանուր է:

ԳԵՐՄԱՆԻԱ

«Norddeutsche Allgemeine Zeitung» լրագիրը հետեւեալ կերպով է հրատարակում այն ցուցակի բնագիրը, որը մայիսի 18-ին Նեպոլեոնի գերմանական զինաւոր հիւպատոսը գերմանական կառավարութեան կողմից ներկայացրեց խեղիվին:

Այդ ցուցակի մէջ ասված է, որ 22-ին հրատարակած Նեպոլեոնի հրովարտելով Նեպոլեոնի կառավարութիւնը շատ միակողմանի կերպով է որոշում պետական պարտքերի կանօնաւորութիւնը, որի մէջ բոլորովին փոփոխված ու աղաւաղված են բոլոր միջևեցայի ընդունված ու խոստովանած օրէնքները:

Բացի այս՝ այն հրովարտակի մէջ գերմանական կառավարութիւնը յայտնի զանաւորութիւն է տեսնում բոլոր այն միջազգային պարտականութիւնների, որոնք ընդունված են Նեպոլեոնի դատարանական նոր վերանորոգութիւնների հետ միասին: Գերմանական կառավարութիւնը պարտք է համարում հերքել հրովարտակի իրաւաբանական նշանակութիւնը, որովհետեւ դրա իրաւաբանական նշանակութեան շատ վատ հետեւանքներ կարող են առաջ գալ. և հէնց դրա համար էլ գերմանական կառավարութիւնը իր բոլոր հրովարտական վերաբերութեամբ երաշխատու և միանգամայն պատասխանատու է համարում նոյն իսկ փոխարքային:

Յունիսի 9-ին երեկոյեան Բերլինում սպասում էին իշխան Բիսմարկի զայտեսանքը: Նոյն օրը երեկոյեան 7 ժամին Պոտսդամից հասան Բերլին Վիլհէլմ կայսրը, կայսրուհին, և Բադենի մեծ հէրցօգը իր ամուսնու հետ: Իշխան Բիսմարկը նրանցից մի ժամով առաջ էր հասել մայրաքաղաքը:

Բերլինից յունիսի 9-ին Ս. Պետերբուրգ ուղեորովեցաւ ուլանեան գնդի պատգամաւորութիւնը շնորհաւորելու ընդհանուր Ռուսաստանի Կայսր Ալեքսանդրին, իբրեւ նոյն գնդի շէֆին, նրա յիսնամեայ յօբէկեանը: Վիլհէլմ կայսրը այդ յօբէկեանի առիթով, պատգամաւորութեան հետ միասին ուղարկեց նորին-Մեծութեան Ալեքսանդր Կայսրին պատուաւոր սուրբ:

Մի և նոյն օրը կէսօրից յետոյ ժամը մէկին Գերմանիայի կայսրը և կայսրուհին ընդունեցին Նրանց Կայսերական Բարձրութիւններին Մեծ Իշխան Ալեքսէյ Ալեքսանդրովիչին և Մեծ Իշխան Միխայէլ Նիկօլաևիչին:

Կէսօրից յետոյ ժամը 5-ին կայսերական պալատում ընտանեկան ճաշկերպի կը լինի, ուր կը հրաւիրվեն կայսերական նորանկան Նաւորութիւնները:

Ամբողջ Բերլինը լքցված է օտարականներով: Օտար պետութիւնների թագաւորական անձնաւորութիւնները երկաթուղու կայարանում ընդունվեցան մեծ հանդէսով: Պայատում կայսրուհին նրանց սիրալիք ընդունելութիւն արաւ:

«ՄԵԱԿ» ԶԵՆՈՒԹԻՆԵՐ

ՄԻԱՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ՓԱՐԻՑ, 7/19 յունիսի: Այսօր ազգային ժողովի Փարիզ փոխադրելու հարցի քննութեան մասին, Փարիզում սկստուի նախագահ Մարտելի նախագահութեան ներքոյ սկստուի և պատգամաւորների ժողովը մի խառն նիստ ունեցան: Լրբուպէ միջնորդը մի ծրագիր ներկայացրեց սահմանադրութեան իններորդ յօդուածի փոխելու մասին, որը ժողովի վէթոյով մնալու համար անհրաժեշտ պարտաւորութիւն է դնում: Վճռվեցաւ, որ այս հարցի քննութեան մասին, անյապաղ 15 մարտից բաղկացած մի մասնաժողով նշանակվի:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԿ, 7 յունիսի: Պետական բանկի 5% տոմսերը առաջին շրջանի արժէ 95 ր. 50 Կ., երկրորդ 95 ր., երրորդ 95 ր., չորրորդ 95 ր., ներքին 5% տոմսեր փոխաւորութեան տոմսեր արժէ 242 75 Կ., երկրորդ 237 ր., արեւելեան տոմսեր փոխաւորութեան տոմսեր արժէ 92 7/8 ր., երկրորդ 92 ր. 95 Կ., ոսկի 8 ր. 39 Կ.: Ռուսաց 1 լուրը Լոնդօնի վրա արժէ 23 11/16 պէնս: Տրամադրութիւնը ամուր է:

Թմբաղի-Հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐՓՈՒՆԻ

Типографія А. А. Михельсона